# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած՝ ՀՀ Գեղարքունիք մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների***

2024թ-ի հոկտեմբերի 11-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ << Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի 2024թ-ի սեպտեմբերի 12-ի հերթական համարում:

Հանրային քնարկմանը մասնակցում էին Արփունք բնակավայրի՝ բնակիչները, վարչական ղեկավարը, Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական՝ Ալիկ Եղիազարյանը, Լուսակունք բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Պետրոսյանը, Վարդենիս համայնքի ավագանու անդամ՝ Դավիթ Շահնազարյանը, Վարդենիսի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Արսեն Խչեյանը և <<Հայնախագիծ>> ԲԲ ընկերության ներկայացուցիչ՝ Հայկազ Սողոմոնյանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու <<Հայնախագիծ>> ԲԲ ընկերության ներկայացուցիչ՝ Հայկազ Սողոմոնյանին:

Հայկազ Սողոմոնյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց, որ քնարկվող նախագիծը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքնության, որի համար նախատեսվում է 2(երկու) հանրային լսում:

<<Հայնախագիծ>> ԲԲ ընկերության ներկայացուցիչ Հայկազ Սողոմոնյանը քնարկման մասնակիցներին ներկայացրեց կրթահամալիրի կառուցվածքային առանձնահատկությունները, նշելով, որ կենտրոնական հատվածում այն լինելու է երկհարկանի, իսկ կենտրոնական հատվածից աջ և ձախ կողմ տարածվող հատվածները լինելու են միահարկ: Նշվեց նաև, որ կրթահամալիրը ունենալու է ճաշարան իր բուֆետով, ինչպես նաև թաքստոց նախատեսված մինչև հարյուր հիսուն հոգու համար: Կրթահամալիրը ապահովվելու է ֆոտովոլտային կայաններով,